

նենի զնոսին եւ տիրաբար մտանելոյ յԱնտիոք, որպէս յետոյ եւ Մանուէլի, Բրինձն՝ լիճ կայսերաց համարեցաւ առ վայր մի. եւ ՚ի մեկնիլն Յունաց եւ ՚ի նուաճել մերոցս Պարոնայց զքաղաքանին՝ ոչ ազատ տեարք համարէին այնոցիկ, այլ իբրեւ ըստ ձեռանէ Բրնձացն, եւ թէ ոչ լիճք՝ այլ *մեծարողք* եւ արգադիրք նոցա³⁸:



Այսու իրաւամբք կամ պահանջմամբ՝ *Պետմունդ Գ* որդի եւ յաջորդ Ռեմունդի եւ Կոստանդիայ, թէպէտ եւ իւրովք կամովք զՏարսոն վաճառեալ էր Ռուբինի՝ այլ տակաւին համարէր զնա իւր պարտական, եւ խարդախութեամբ կալեալ եւ արձակեալ, ոչ միայն եհատ ՚ի նմանէ բերդս եւ վիճակս, այլ եւ ՚ի նոյն մեծարանս հարկեցոյց: Յայսմ հարկի կայր եւ Լեւոն ՚ի յաջորդելն զՌուբէն. եւ թէպէտ ինքնիշխանաբար եւ տիրաբար գործէր եւ ընդարձակէր զսահմանս տէրութեանն, մինչեւ միջամուխ լինել ՚ի կալուածս իսկ վեհագունին իւրոյ Բրնձին, սակայն ըստ քաղաքական օրինաց եւ յաչս այլոց քրիստոնեայ տերանց երկրին Ասորոց՝ տակաւին Բրինձն Անտիոքայ համարիւր վեհագոյն Պարոնին Հայոց. որում եւ ինքն իսկ Լեւոն երեւի հատուցեալ զպարտս մեծարանաց՝ ՚ի սկզբան պայագատութեանն, մինչ չեւ էր ձգեալ զբազուկսն ՚ի վերայ մարզից մարզից, եւ մինչ չեւ էր Սալաիէտտիի միւսեալ ՚ի սահմանս նորին Անտիոքացոյ եւ տկարացուցեալ զնա. եւ առ ակնաձութեան իսկ, ասեն, ՚ի նմանէ, եւ ՚ի շահել զնա, էառ ՚ի կնութիւն զազգականն եւ զհամանուն կնոջ նորա Սիպիլայ:

Արժան է գիտել ՚ի պէտս ապա պատմելեացս, զի այս Սիպիլ (երրորդ կամ չորրորդ կին Պետմունդի), անտիոքացի էր ազգաւ, թերեւս եւ յազնուաց, այլ անձանօթ մնայ տունն, որով եւ աներ մերոյ Պարոնիս. բայց ինքն համբաւեալ էր իբրեւ վիուկ մի ջատուկ. եւ նա ինքն ընծայեցոյց Լեւոնի զկլինն՝ զոր էառ սա, որպէս ասացաք, առ քաղաքական տեսութեան եւ ոչ

³⁸ Այս ինքն է ըստ աւատական օրինաց faire hommage: